ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ԱՊՐԻԼԻ, 2017 թ.
№ 7 (1007)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Ցավի, հիշատակի, պայքարի ու ոգեկոչման օր...

Ցավի, հիշատակի, պայքարի ու ոգեկոչման օր...

102 տարի է անցել, բայց թուրքը չի փոխվել, նա անզիջում է ու համառ, քանզի չի ընդունում փաստը՝ բացահայտ իրականությունը:

Թեև 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը շարունակում է հուզել Երկիր մոլորակի առաջադեմ մարդկությանը, և այդ մասին խոսում են անգամ որոշ թուրք առաջադեմ մտավորականներ, այնուամենայնիվ, հարցի լուծումը գտնված չէ, աշխարհը չի ուզում ճանաչել Հայոց ցեղասպանության հարցը, չի ուզում 1915 թվականի ոճրագործությունը կոչել ցեղասպանություն:

Այսօր դա պետք է ոչ միայն մեզ, այլև բոլորին ու յուրաքանչյուրին, որպեսզի այլևս չկրկնվեն նման եղերական հանցագործություններ:

Իսկ առայժմ խոսում են թվերն ու փաստերը, բայց որոնք անզոր են ընդդիմանալ մեծ տերությունների քաղաքական ու տնտեսական շահերին:

Ժամանակն առաջ է ընթանում, օրեցօր նվազում է ցեղասպանությունը վերապրածների թիվը, բայց այն, ինչ տեսան նրանք, փոխանցվում է նրանց սերունդներին...Եվ Ցեղասպանության ողբերգությունն ու 1,5 միլիոն զոհերի արյունը ժամանակի ու տարածության մեջ չի տարրալուծվում, ընդհակառակը՝ բռունցքվում է, ահագնանում աշխարհասփյուռ հայության պահանջատիրության կամքն ու արդար դատի ձգտումը....

Ապրիլի 24. օր ցավի, հիշատակի, պայքարի ու ոգեկոչման ...

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կոլեկտիվը՝ պրոֆեսորադասախոսական կազմը, աշխատողները և ուսանողները մասնակցեցին օրվա քայլերթին և ծաղկեպսակ դրեցին Ծիծեռնակաբերդի բարձունքում գտնվող անմար կրակի մոտ:

«Ավարտական վկայականը ձեզ ուղեկցելու է ողջ կյանքի ընթացքում»

Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանն ապրիլի 25-ին հանդիպեց հեռակա համակարգում սովորող ավարտական կուրսերի ուսանողների հետ:

Ռեկտորը ուսանողներին ասաց, որ հեռակա համակարգում այս տարի ներդրվել է քննությունների հանձնման էլեկտրոնային տարբերակը, որ քննասենյակներում լինելու է անհրաժեշտ գրականություն և քիչ թե շատ գիտելիքներ ունեցող ուսանողները կարող են ուղղորդվել առկա գրականությամբ:

«Երկուստեք ձգտում ենք դրական գնահատականների. մենք էլ ենք ուզում, որ դուք դրական նիշեր ստանաք, ձեր ցանկությունն էլ է դա: Ոչ ոք չի կարող խանգարել ձեզ, մենք լինելու

➤2

«Այստեղ ես հանդիպում եմ իմ պատանության և երիտասարդության հետ»,-

ասաց ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը

Ապրիլի 27-ին Մանկավարժական համալսարան այցելեց ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը: Նախարարը նախ եղավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետում և շնորհակալագրեր հանձնեց Մայրության և գեղեցկության տոնի առթիվ կազմակերպված ցուցահանդեսի հաղթող ճանաչված երեք լավագույն ուսանողուհիներին, այնուհետև Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում հանդիպեց մշակութային մասնագիտություններ ստացող ուսանողների հետ: Նախարարը վստահ էր՝ այստեղ հանդիպելու է ոչ միայն ուսանողներին, այլև վաղվա իր գործընկերներին, որոնք ժամանակակից մոտեցումներով մշակութային հաղորդակցության նոր ճանապարհներ են գտնելու Հայաստանի մշակույթի ոլորտը հարստացնելու՝ նպաստելով հայրենաշինությանը:

➤2

«Ավարտական վկայականը ձեզ ուղեկցելու է ողջ կյանքի ընթացքում»

➤1 ենք չափազանց բարյացակամ, իսկ դուք քննության միավորներն իմանալու եք անմիջապես, երբ հանձնաժողովի անդամների գնահատականներից համակարգիչը միջին միավոր հանի»: Ապա ռեկտորը հորդորեց սովորել և զարտուղի ճանապարհներ չփնտրել:

Ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ Սամվել Ասատրյանն ուսանողներին հանգամանորեն բացատրեց էլեկտրոնային համակարգի նոր ձևաչափով քննություն հանձնելու նրբությունները և պատասխանեց հարցերին:

Անցյալ տարի դրական միավորներ են ստացել քննություն հանձնողների 92,5 տոկոսը: Ռեկտորը հորդորեց գերազանցել այս ցուցանիշը, իսկ քննական խնդիրների դեպքում դիմել իրեն:

«Ավարտական վկայականը ձեզ ուղեկցելու է ողջ կյանքի ընթացքում, եթե ուզում եք այն կշիռ ունենա, պետք է միասին աշխատենք»,-ասաց ռեկտորը՝ կոչ անելով բարձր պահել դիպլոմի վարկանիշը:

«Այստեղ ես հանդիպում եմ իմ պատանության և երիտասարդության հետ»,-

Նախարարի հետ հանդիպումը ջերմ էր ու անմիջական. 1985 թվականից Արմեն Ամիրյանը կապված է Մանկավարժական համալսարանի հետ, բուհի շրջանավարտ է, աշխատել է ամբիոնի վարիչ, մոտիկից գիտի ուսանողների խնդիրներն ու մտահոգությունները: Սովորել է Յուրի Երզնկյանի ղեկավարած ամբիոնում, հնարավորություն ունեցել շփվելու մշակութային տարբեր սերունդների հետ:

Ա. Ամիրյանը ուսանողներին հստակ ու հանգամանալի տեղեկատվություն տվեց Երևանում և մարզերում նախատեսված մշակութային գլոբալ ծրագրերի, ապագայի տեսլականի, արվածի և անելիքների մասին: Նա կտրուկ անդրադարձներով ներկայացրեց մշակույթի ոլորտի ներկա վիճակը, խնդիրները, դրանց լուծման ուղիները:

Նախարարը ուսանողներին խորհուրդ տվեց հետևել ֆեյսբուքյան իրենց էջին, խոսեց մշակույթի արժևորման հետ կապված ծրագրերի մասին, որոնք ենթադրում են շահութաբերություն և արվեստի տվյալ տեսակի հանրահռչակում, միաժամանակ ներկայացրեց պատմաշակութային հուշարձանները և քարանձավները զբոսաշրջությանը ծառայեցնելու, կինոարտադրության ոլորտում հանձնակատարի ինստիտուտ և Հայաստանում ամերիկյան կինոարտադրության դպրոց ստեղծելու հարցերի շուրջ, որոնք ևս ենթադրում են երկրի հանրահռչակում ու ֆինանսների ներդրում:

Արմեն Ամիրյանն անդրադարձավ նաև վիրտուալ թանգարանների հարցերին, գրահրատարակչության ոլորտին, նոր տիպի գրախանութներին, գրատնակներին ու գրաբուսներին՝ կարևորելով թե՛ տպագիր, թե՛ էլեկտրոնային գիրքը, հավելելով, որ Մշակույթի նախարարությունը որդեգրում է SS ոլորտի բոլոր հնարավորությունների կիրառումը:

Նախարարն ընդգծեց օտարերկրացիների համար հայկական օպերաները հասկանալի դարձնելու կարևորությունը և այդ նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի բեմի վերնամասում թարգմանական տողերի առկայությունը:

Հանդիպման ավարտին ուսանողները հարցերով ու առաջարկություններով դիմեցին ՀՀ մշակույթի նախարարին. հստակ պատասխաններից բացի նախարարը հորդորեց ուսանողներին՝ ավարտելուց հետո վերադառնալ իրենց բնակավայրերը և նպաստել տեղի մշակութային կյանքի զարգացմանը՝ չմոռանալով նաև օգտվել նախարարության ֆինանսական աջակցության շահավետ ծրագրերին մասնակցելու առաջարկներից:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի և սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի հրավերով երկօրյա այցով Մանկավարժական համալսարանում էին Ռուսաստանի Դաշնությունից հրավիրված մի խումբ դասախոսներ: Նրանք ֆակուլտետի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի հետ քննարկեցին սոցիոլոգիայի ոլորտում համագործակցության մի շարք հնարավորություններ:

Ռուսաստանյան պատվիրակության կազմում էին Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Քաջիկ Օհանյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր «Գիտական միտք» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիր Ստանիսլավ Բոյկոն (Չերեպովեց), սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Բիստրյանցևը (Ս. Պետերբուրգ), Տատյանա Գուժավինան (Բելգորոդ), Ուֆայի պետական տեխնիկական համալսարանի փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, էդուարդ Գարեևը, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իրինա Սինովան (ք. Պետերբուրգ) և Չերեպովեցի մասնաճյուղի սոցիոլոգիայի և անձնակազմի ղեկավարման ամբիոնի ասպիրանտ Աննա Ֆոմիչենկոն:

Ապրիլի 19-ին հյուրերը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում հանգամանորեն քննարկեցին առաջիկա համագործակցության հնարավոր ուղիները: Գործարար խոսակցություն ծավալվեց դասախոսների և ուսանողների փոխանակման, մագիստրոսների թեզերի նախապաշտպանությունը Ռուսաստանյան բուհերում կազմակերպելու, համատեղ մենաշնորհային ծրագրերի կազմակերպման և լաբորատորիաների ստեղծման, գիտական պարբերականներում փոխադարձ հոդվածներով հանդես գալու և այլ խնդիրների շուրջ:

Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր Իրինա Սինովան զրույցի ընթացքում խոստովանեց, որ «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում աշխատել է Մանկավարժական համալսարանի ուսանողների հետ և հիացած է՝ նրանք հետաքրքիր են, կրթված ու տաղանդավոր»:

Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի շրջանավարտ, այժմ ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արա Սահակյանը, ով շուրջ 30 տարի ապրել և աշխատել է Սանկտ Պետերբուրգում, ներկայացրեց առաջիկա անելիքների մասին իր ծրագրերն ու հեռանկարները: Նա վստահեցրեց, որ իր հրավիրած առաջատար մասնագետները կարևոր ու գործնական առաջարկներ են արել, որոնք առայժմ քննարկման փուլում են: Աշխատանքային քննարկումները համագործակցության մեկնարկն են, որի գործնական դրսևորումները միտված կլինեն ուսանողների մասնագիտական զարգացմանը:

Այնուհետև հյուրերը համալսարանի կարմիր դահլիճում հանդես եկան բաց դասախոսություններով:

Բացման արարողությանը հյուրերին ողջունեցին համալսարանի պրոռեկտորներ Սրբուհի Գևորգյանը և Արա Երեմյանը, դեկան Ռուզաննա Պետրոսյանը, ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արա Սահակյանը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը վստահեցրեց, որ Մանկավարժական համալսարանը կարևորում է սոցիոլոգիա գիտությունը, ինչպես նաև հաշվի է առնում աշխարհում արագ փոփոխվող սոցիոլոգիական տեսությունն ու աշխարհում նրա կիրառական զարգացման միտումները: Պրոռեկտոր Արա Երեմյանն էլ հանդիպումը համարեց նոր սկիզբ ամբիոնի գիտական կյանքը նորովի կազմակերպելու համար:

Երկօրյա դասախոսությունների թեմաներն ակտուալ էին և հետաքրքրական: Ներկաները լսեցին Քաջիկ Օհանյանի «Ինտելեկտուալ կապիտալի տեսական կոնցեպցիաները», Ս. Բոյկոյի «Սոցիոլոգիան գիտության աշխարհում. զարգացման հեռանկարները», Ս. Բիստրյանցևի «Վստահությունը որպես սոցիալական նորմ», Տ. Գուժավինայի «Սոցիալական կապիտալը որպես հասարակական բարիք», Է. Գարեևի «Սոցիոլոգիական հետազոտությունների դերը ծայրամասային հյուսիսային քաղաքների և շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման մեջ», Ս. Բիստրյանցևի «Սոցիոլոգիական հայացք վստահության ֆենոմենին», Ի. Սինովայի «Սոցիալական աշխատանքի ակտուալ հարցերը եվրոպական երկրներում և Ռուսաստանում», Ս. Բոյկոյի «Քաղաքացիական և զինվորական բուհերի ուսանողների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի բովանդակությունն ու առանձնահատկությունները» զեկուցումները:

Պատվիրակության անդամները ծանոթացան համալսարանի թանգարանին և բուհի պատմությանը, ինչպես նաև հայ գործընկերների ուղեկցությամբ երկօրյա այցելություններ իրականացրին Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ...

Ինչքան ենք ուզում լսել այդ բառը պետությունների ղեկավարների ու առանձին անհատների շուրթերից: Դա մեզ ինչ է տալիս. ոգեկոչում է, մեր անմեղ զոհերի հիշատակն է հավերժացնում: Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Մեզ պետք չէ մուրալ այդ բառը, մեր արժանապատվությունն ու ինքնասիրությունը թանկ են:

Զարմանալին այն է, որ ԱՄՆ-ի 50 նահանգներից 45-ը, կամ նրա բնակչության 90 տոկոսից ավելին՝ 280 մլն մարդ արդեն ընդունել է հայոց ցեղասպանությունը, բայց դաշնային կառավարությունը հաշվի չի նստում արդարության, ԱՄՆ-ի նախկին նախագահների, պետական ու քաղաքական գործիչների, կոնգրեսականների ու սենատորների, նահանգների ընդունած որոշումների և սեփական ժողովրդի հեղինակության ու կարծիքի հետ, և որպես ռազմավարական դաշնակից, ավելի շատ գնահատում ու հաշվի է նստում 75 մլն բնակչություն ունեցող Թուրքիայի հետ: Պարզվում է Թուրքիային դուր գալն ավելի կարևոր է, քան սեփական նահանգների ընդունած որոշումները հարգելը:

Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը, պետք է արժանապատվություն ունենա առերեսվելու սեփական պատմության հետ: Այսօրվա թուրքերը հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն իրականացնողների թոռները և ծոռներն են: Ցեղասպանություն իրականացրել է թուրք (նաև քուրդ) ժողովուրդն իր վերնախավի ու կառավարիչների հետ: Այս կարծիքը հիմնավորվում է նաև իմ կողմից ուսումնասիրած 950 թուրքերեն սկզբնաղբյուրներով ու գրականությամբ: Բնավ պետք չէ հայ-թուրքական պատմաբանների հանձնաժողով ստեղծել՝ պարզելու, թե իրականում ինչ է կատարվել անցած դարի սկզբներին, մենք տարակուսելու ոչինչ չունենք: Յուրաքանչյուր հայ ընտանիք շատ լավ գիտի իր գերդաստանի պատմությունն ու ճակատագիրը: Ատլաս տատիկիս տեսածը, ապրածը, զգացածն ու պատմածը մեր ընտանեկան գերդաստանի 63 անդամներից 60-ի գազանային սպանությունների մասին վեր է ամեն մի իրողությունից և բնավ քննարկման ու ապացուցման կարիք չի զգում:

Այդ բոլորը գալիս են ասելու, որ հիմնավոր են թուրքերի հասցեին ուղղված հայտնի մարդկանց հետևյալ խոսքերը. «Թուրքերը պատմության և քաղաքակրթությունների բացասական կերպարներն են» (Առնոլդ Թոյնբի՝ անգլիացի պատմաբան, Նիկոլայ Դանիլևսկի՝ ռուս փիլիսոփա), «Երախտամոռ էթնոս, ով ոչ միայն մշակութային քաղաքակրթական արժեքներ չի ստեղծել, այլև զբաղվել է հարևանների ստեղծած քաղաքակրթական արժեքների ոչնչացմամբ», «Երջանիկ են, բայց դա չեն գիտակցում աշխարհի այն ժողովուրդները, ովքեր չունեն քաղաքակրթություն կործանող հարևաններ» (Ալեքսան Կիրակոսյան՝ պետական-կուսակցական գործիչ), «Քաղաքակրթության ճանապարհ դուրս գալու թուրքերի բոլոր փորձերը ողորմելիորեն ձախողվեցին» (Կ.Մարքս, Ֆ. Էնգելս), «Թուրքերի ընչաքաղցությունը, ավարառության կիրքը և թալանչիական ավյունը սահմաններ չգիտեին» (Ստեֆան Ցվայգ՝ գերմանացի գրող), «Թուրքերի հզորությունը հիմնված էր նվաճումների վրա. շարունակ պատերազմներ էր մղում և զինադադարներ կնքում», «Քաղաքակիրթ մարդուն զարմանք է պատճառում թուրքերի կուլտուրական շատ ցածր աստիճանը» (Հեգել՝ գերմանացի փիլիսոփա), «Թուրքերի պատմական դերը շատ հաճախ և արդարացի համեմատում են շնագայլերի և գիշատիչ թռչունների հետ, կարծես թե կազմված մահմեդական քաղաքների փողոցներում սանիտար ոստիկաններից, որոնք խժռում են այն լեշը, որը ոչ ոք չի մտածում հավաքել» (Լև Մեչնիկով՝ ռուս աշխարհագետ), «Այստեղով թուրք է անցել, ամեն ինչ ավերված է և սգավոր» (Վիկտոր Հյուգո՝ ֆրանսիացի գրող), «Աբդուլ Ազիզ սուլթանը ներկայացուցիչ է մի ժողովրդի, որը բնությամբ և դաստիարակությամբ ստոր է, դաժան, տգետ, հետադեմ, սնոտիապաշտ և կառավարման մի ձևի, որի երեք շնորհներն են. բռնակալությունը, անկշտությունը և արյունը» (Մարկ Տվեն՝ ամերիկացի գրող): Օրինակները կարելի է շարունակել...

Բայց առանց դրա էլ ամեն ինչ պարզ է...

Յուրիկ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների թեկնածու

ԱՐԴԱՐԱՑԻ ՊԱՀԱՆՋ

Հազարամյակների պատմություն ունեցող հինավուրց ժողովուրդը, որ աշխարհին հայտնի է արհեստների ու մշակույթի բնագավառում մեծ ձեռքբերումներով, իրավունք ունի պահանջելու Օսմանյան Թուրքիայի ժառանգներից՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, հարգել նահատակված հայերի անմահ հիշատակը: Միայն այդ կերպ նրանք կարող են ինչ-որ չափով թեթևացնել իրենց նախնյաց գործած ծանր ոճիրը: Թուրք պատմաբաններն ու գիտնականները, որ փորձում են խեղաթյուրել իրականությունը, պետք է հասկանան վերջապես, որ ճշմարտությունը չի մեռնում: Այն ոչ միայն մեզ է պետք, այլև այսօրվա թուրք երիտասարդ սերնդին, որ չշարունակի ապրել իր պապերի ծանր մեղքն իր ուսերին կրելով: Այսօր մենք՝ հայերս պահանջատեր ենք, և մեր պահանջն արդարացի է ու ազնիվ:

Անցել են մեր անմեղ զոհերի համար ողբալու և ցավ ու վշտով նրանց հիշելու ժամանակները: Այժմ մենք պետք է պահանջենք Թուրքիայից՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, մեր ներողամտությունը հայցել և հատուցել մեկուկես միլիոն անմեղ հայերի ոչնչացման համար, որոնց միակ մեղքը հայ լինելն էր: Թուրքիան պետք է ոչ միայն բարոյական, այլև նյութական հատուցում տա: Հատուցումը պետք է լինի ոչ միայն միլիոնից ավելի խոշտանգված մարմինների, հայերին իրենց շեն տներից հանելու և անապատներ քշելու, բազմադամ ընտանիքներին ոչնչացնելու և աշխարհով մեկ սփռելու համար, այլև հայ վարպետների ձեռքով կերտած հազար ու մի եկեղեցիները, ծաղկուն քաղաքներն ու շեները ավերակների վերածելու, մեծահարուստ հայերի ողջ ունեցվածքը խժռելու և հայկական շեն հողերը յուրացնելու և ամայի դարձնելու համար, այն հանճարեղ մտավորականների համար, որոնց քանքար գլուխները թուրքական յաթաղանի անխնա հարվածները կրեցին կամ չդիմանալով ոճրագործի իրականացրած ահասարսուռ տեսարանների ազդեցությանը՝ կորցրեցին բանականությունը: Արդարացի է մեր պահանջը, պահանջատիրական այդ շեշտը պետք է կրեն և՛ հայ քաղաքագետների ելույթները միջազգային ու այլ ատյաններում, և՛ մշակույթի գործիչների ստեղծագործությունները, և՛ շրջագայությունների ժամանակ մեր մշակույթի ներկայացուցիչների ելույթները: Մենք՝ երիտասարդներս, նույնպես չպետք է մոռանանք այդ մասին: Եթե մոռանանք այդ իրադարձությունը՝ մարդկության դեմ արված այդ ահավոր ոճրագործությունը, դա կլինի մեծ սխալ և ամեն մի հայի, և ողջ մարդկության համար, անկախ այն բանից՝ կճանաչի՞ Թուրքիան ցեղասպանությունը, թե ոչ: Աշխարհի ողջ առաջադեմ մարդկությունը, բոլոր այն երկրները, որոնք համարում են, որ դա Թուրքիայի ծանր հանցանքն է եղել, իրենց պառլամենտներում, իրավական ակտերով իրավական գնահատական պետք է տան Թուրքիայի ոճրագործությանը: Անհրաժեշտ է դիմել այդ երկրների կառավարություններին, որ մանրամասն ուսումնասիրեն, թե ինչպես են հայերը հայտնվել իրենց երկրում, մահից փախչելով, ինչու են ստիպված եղել թողնել իրենց երկիրը:

Մայրիկս պատմում է, որ իր տատիկը հաճախ էր պատմում, որ երբ թուրք ենիչերիները մոտեցել են իրենց գյուղին, ծնողներն իրեն թաքցրել են խոտի դեզի մեջ: Նրանք ավերել են գյուղը, տներից վերցրել արժեքավոր ամեն ինչ և իրենց հետ տարել երիտասարդ, անչափահաս հայ աղջիկներին: Այսօր ես էլ եմ պահանջատեր, ես էլ եմ զգում այն ցավն ու տառապանքը, որ ապրել են իմ նախնիները: Եվ չնայած չեմ տեսել ու ապրել այդ ոճիրն ու հալածանքը, ինչպես բոլոր հայ երիտասարդները, իմ գեների հետ ժառանգել եմ նաև նախնիներիս նկատմամբ գործած մեղքերի համար Թուրքիային արդարացի պահանջ ներկայացնելու ձգտումը և թուրք երիտասարդների կողմից մեր՝ հայերիս ներումը հայցելու ակնկալիքը:

Խոստովանել, որ 20-րդ դարասկզբի ոճրագործությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իրենց նախնիների կողմից հային բնաջնջելու, հայ ազգին վերացնելու կանխամտածված ծրագիր: Սա է այսօրվա մեր պահանջը, և այդ պահանջը կհնչի այնքան ժամանակ, քանի դեռ գոյատևում է հայ ազգը, քանի դեռ մեկուկես միլիոն անմեղ զոհերի հոգիները չեն խաղաղվել: Նրանք շարունակ երկնքից ողբում են շղթայված Մասիսի ու օտարի ոտքի տակ տրորվող մեր սուրբ հողերի համար, որովհետև ցեղասպանությունը դատապարտելու համար վաղեմության ժամկետ գոյություն չունի, իսկ մեղավոր կողմը դեռ չի ընդունում իր մեղքը: Եթե Թուրքիայի ներկա քաղաքական գործիչներն ու պատմաբանները փորձում են արդարացնել Օսմանյան Կայսրության կառավարությանը՝ հայտարարելով, որ իրենց կողմից կոտորված ժողովուրդները հավատարիմ էին իրենց այն ժամանակվա թշնամի Ռուսաստանին, կամ նույնիսկ այդ երկրի լրտեսներն էին, առաջադեմ մարդկությունն այլ կերպ է գնահատում այդ իրողությունը: Շատ երկրներ արդեն ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Անցյալ տարի Հռոմի պապը ևս Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագի ժամանակ արտասանել է Թուրքիայի համար ոչ ցանկալի բառը՝ 1915 թ. իրադարձությունները կոչելով Ցեղասպանություն:

Օսմանյան Թուրքիայի կառավարությանը դատապարտելու որոշ թուրք առաջադեմ պատմաբանների և քաղաքական գործիչների փորձերը մի փոքր հույս են ներշնչում, որ Թուրքիայի երիտասարդ սերունդը վերջապես կհասկանա ու կդատապարտի իր նախնիների գործած մեղքերն ու սխալները և ոչ թե դրան կավելացնի նոր սխալներ՝ անտարբերություն և ատելություն ցուցաբերելով հայոց արդարացի պահանջի նկատմամբ:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը անխուսափելի պատմական գործընթաց է: Եվ ի հեճուկս նրանց, ովքեր հայերի բնաջնջումն էին ցանկանում, մենք՝ հայերս, ոչ միայն չենք ոչնչացել, այլև դարձել ենք ավելի ուժեղ և համախմբված: Այսօր հայ ժողովուրդն աշխարհին ներկայանում է վերածնված և պահանջատեր ու իր ձայնն ուղղելով աշխարհի ողջ առաջադեմ մարդկությանը, հատուցում է պահանջում Թուրքիայից: Իսկ հատուցման օրը կգա անպայման, ու Թուրքիան ողջ մարդկության ու հայերի առաջ պատասխան կտա իր կատարած ոճրագործության համար:

Սոնա ԽԼՈՊՈՒՋՅԱՆ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

ՈՐ ԸՆԹԵՐՑՈՂԸ ԿԱՐՈՂԱՆԱ «ՀԱՍԿԸ ՄՂԵՂԻՑ ՏԱՐԲԵՐԵԼ»...

«Յուրաքանչյուր անհատ ունի իր սիրելի պարբերականը, թերթը: Մեզնից շատերի համար սիրելի թերթ է «Գրական թերթը», որի լույս տեսնելուն անհամբերությամբ սպասում ենք յուրաքանչյուր ուրբաթ: թերթում զետեղված նյութերը մտերմիկ զրույցներ են ընթերցողի հետ»,- «Գրական թերթի» աշխատակազմի հետ արդեն Բանասիրական ֆակուլտետում ավանդական դարձած հանդիպումն այսպես բացեց ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Գալստյանը:

Թերթի անցած ճանապարհի, խորագրերի, մատուցվող նյութերի մասին խոսեց հանդիպման «մեղավոր» ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանը: Տարիներ առաջ նրա դասախոսներից մեկը՝ Պարույր Սահակյանը լսարան է մտել և հարցրել, թե ուսանողներից քանիսն են «Գրական թերթ» ստանում: Ա. Դոլուխանյանն էլ իր ուսանողներին է հարցնում և հորդորում կարդալ «Գրական թերթ», քանզի ապագա բանասերները չպետք է հեռու մնան գրական կյանքից:

Հանդիպմանը ներկա էին «Գրական թերթի» տարբեր տարիների երեք խմբագիրներ՝ Նորայր Ադալյանը, Սամվել Կոսյանը և Կարինե Խոդիկյանը: Ներկաները փաստում են՝ Ն. Ադալյանը և ներկայիս խմբագիր Կարինե Խոդիկյանը երկու անգամ են եղել թերթի խմբագիր, իսկ Նորայր Ադալյանի ժամանակ թերթը մեծ ծավալով էր տպագրվում, անգամ միջնորդություն էր պետք բաժանորդագրվելու համար:

Գրական թարգմանությունները, տարակարծությունները, Ս. Կոսյանի քաղաքական սյունակը, համարձակ հոդվածները մեր իրականությունում տեղ գտած ստվերային հարցերի մասին թերթը դարձնում են առավել հետաքրքիր ընթերցողների համար՝ համոզված է Ա. Դոլուխանյանը:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողների զգալի մասը «Գրական թերթի» լավագույն ընթերցողն է: Այդ են վկայում ուսանողներ Էդգար Ապրեսյանի, Լիլիթ Կարապետյանի, Անի Ղալաչյանի, Կարինե Հովհաննիսյանի ելույթները: Նրանք համոզված են, որ թերթը ծառայում է երիտասարդների գրական մտածողությանը, որը բացահայտում է երևույթների ներքին, էական կապերը, տալիս է բանիմացություն, զարգացնում է սերնդի գրական ճաշակը, օգտակար տեղեկատվություն տալիս ժամանակի գրական ու մշակութային դեմքերի և իրադարձությունների մասին:

Հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանն ասաց. «Գրական թերթը մեզ ուղեկցում է դեռ 30-ական թվականներից. որը ժամանակի հայացքի մեջ ունի բովանդակային խորք: Թերթը հաջողություն ունի, երբ ընթերցողի կյանքում կարողանում է որևէ բան փոխել, նրան տանել դեպի առաջընթաց ու զարգացում: 80-ականներից թերթը միշտ փորձել է գտնել իրեն, պահպանել խոսքի կշիռն ու ըմբռնումը»:

Գրականագետը մատնանշեց թերթի երբեմն մարտնչող հոգեբանության բնույթը, որ նկատելի է խմբագրականներում ու տարբեր հոդվածներում, ընդգծեց ժամանակի գրական խմորումների արտացոլման անհրաժեշտությունը թերթում ու հավելեց. «Այսօր փաստ ու երևույթ է «Գրական թերթի» ներկայությունը Մանկավարժականում:

Այո, մեր ուսանողները կարիք ունեն հաղորդակցվելու արժեքների և արժևորումների հետ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանն իր մտահոգություններն արտահայտեց թերթում ժամանակի գրականության հանդեպ գրաքննադատների վերաբերմունքի արտացոլման մասին:

«Գրական թերթը» գրական պրոցեսներ չի առաջացնում, այլ փորձում է հասնել նրան, որ ընթերցողը հասկը մղեղից կարողանա տարբերել, թերթի գրականագիտական միտքը հասցնել ընթերցողին:

«Ես ուրախ եմ, որ Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում ունենք ընթերցողների մեծ խումբ և ինչ-որ չափով պատասխանատվություն ենք կրում երիտասարդ ընթերցողների գրական ճաշակին նպաստելու և աշխարհայացք ստեղծելու համար»,-ասաց շաբաթաթերթի խմբագիր, դրամատուրգ Կարինե Խոդիկյանը:

«Եթե գրողը կարող է հաշվի չնստել ընթերցողի հետ, ապա խմբագիրը ակնկալում է ընթերցողի բարյացակամությունը և դուք՝ ընթերցողներդ, պետք է շահագրգռված լինեք թերթի որակի համար»-ասաց գրող, թերթի նախկին խմբագիր Նորայր Ադալյանը՝ հավելելով, որ «Գրական թերթը» իր էությունն է:

85-ամյա թերթի լավագույն տարիները կապված են 60-ականների այն շրջանին, երբ թերթի խմբագիրը մեծ բանաստեղծ Համո Սահյանն էր: Թերևս մեր իրականության մեջ ամենաերկարակյաց գրական թերթին ներկաները մաղթեցին երկար ճանապարհ և բազում ընթերցողներ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Արբիտրաժների մշակույթը Հայաստանում դեռևս կայացման փուլում է

Մանկավարժական համալսարանում կայացավ «Վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգերը» թեմայով սեմինար-քննարկում, որը նախաձեռնել էր ՀՊՄՀ-ի Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Սեմինարի մասնակցիները քննարկեցին արբիտրաժը՝ որպես վեճերի լուծման արտադատարանային տարբերակ. նրա առավելությունները, ՀՀ-ում նրա կիրառելիությունը, այլ երկրների փորձը և այլն:

Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Վլադիմիր Հովհաննիսյանը նկատեց, որ արբիտրաժը դեռևս Հայաստանում շատ տարածված չէ, և շատերը դրա մասին տեղեկացված չեն: «Արդարադատությունը պետք է իրականացնել հանգիստ, դանդաղ և հետևողական: Մեր հանրապետության պրակտիկայում հանդիպում են միչև 4 տարի քննվող դատական գործեր, որոնք բացասական ազդեցություն են ունենում մարդկանց վրա: Արդարադատությունը պետք է արդար լինի, բայց դրա հետ մեկտեղ իրավաբաններն ու գիտնականները փորձել են գտնել այնպիսի գործիքներ, որ այդ արդարադատությունը իրականացնելու ընթացքում ժամանակի գործոնը բացասական ազդեցություն չունենա կողմերի վրա»,- ասաց Վլադիմիր Հովհաննիսյանը և հավելեց, որ արբիտրաժն արդյունավետ միջոց է, որի համար անհրաժեշտ են մի քանի գործոններ՝ վստահ լինել, որ արբիտրն արդար է լինելու, ինստիտուտի ձևավորման հիմքում ընկած կարգավորումը լինի իդեալական:

ՀՊՄՀ-ի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց նման թեմայով սեմինարի անցկացումը բուհում՝ նկատելով, որ այն կօգնի երիտասարդներին ավելի զինված լինել այս ոլորտում և գիտելիքների ու կարողությունների հետ կապված որոշակի կանոնակարգված մոտեցումներ ունենալ: Պրոռեկտորը նշեց՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս ոլորտում ամենամեծ հետաքրքրությունը ցուցաբերում են իրավաբաններն ու հոգեբանները: Ցավոք, Հայաստանում հոգեբանները չունեն ոլորտի վերաբերյալ բավարար գիտելիքներ»,- ասաց Սրբուհի Գևորգյանը:

«Այսօր շատ է կարևորվում վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգը, քանզի այսօր դատական համակարգը շատ ծանրաբեռնված է, յուրաքանչյուր դատավորի վարույթում ընդհուպ մինչև 1500 գործ կա: Գործերի քննությունը երկարատև է լինում, խախտելով մարդու արդար դատաքննության իրավունքի՝ ողջամիտ ժամկետում իրականացման սկզբունքը, այդ իսկ պատճառով արբիտրաժների, հաշտատարություն միջոցով վեճերի լուծման մեխանիզմներն առավել արդյունավետ են: Արբիտրաժի միջոցով հնարավոր է առավել կարճ ժամկետում հասնել վեճի լուծմանը: Իրազեկվածության համակարգի բարձրացումը կնպաստի վեճերի արտադատարանական լուծմանը, կառուցակարգերի զարգացմանն ու կիրառմանը:

Արբիտրաժների մշակույթը Հայաստանում դեռևս կայացման փուլում է գտնվում, քանզի այսօր հասարկությունը տեղեկացված չէ»,- ամփոփեց Լուսինե Հակոբյանը:

Ոլորտի առաջատարներ մասնագետներ Աիդա Ավանեսյանը, Հայկ Հովհաննիսյանը և Լուսինե Թասալյանը հանդես եկան զեկուցումներով՝ առավել մանրամասն ներկայացնելով արբիտրաժի նպատակներն ու առավելությունները :

Սեմինար-քննարկման կայացմանը աջակցել էր Պատմության և իրավագիտության ֆակուլտետը, Միջազգային իրավունքի ասոցիացիան, Մեդիացիայի, արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման ծառայություններ և «Հովհաննիսյան և գործընկերներ» ՍՊԸ-ն:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ամերիկացի գիտնականը՝ Մանկավարժականում

Ամերիկացի հայտնի գիտնական, Չիկագոյում Իլինոյսի համալսարանի կրթական հոգեբանության ֆակուլտետի պրոֆեսոր, արմատներով հայ Արթին Գոնչուն եռօրյա այցով հյուրընկալվել էր Մանկավարժական համալսարանում: Պրոֆեսորը տարբեր լսարանների առջև հանդես եկավ մի շարք դասախոսություններով:

«Երեխայի հոգեկան զարգացումը և դաստիարակության խնդիրները» թեմայով դասախոսության ընթացքում Արթին Գոնչուն ներկայացրեց սկզբնական կրթության ոլորտում իր առաջադրած նոր մոտեցումը: Անդրադառնալով կրթության ոլորտում կատարած հետազոտության արդյունքներին՝ պրոֆեսորը ներկայացրեց դրա հիման վրա ստեղծած իր մեթոդը, որն այսօր կիրառվում է ԱՄՆ-ում:

Արթին Գոնչունի նոր տեսության հիմքում համադրված են պատմամշակութային տեսության հիմնադիր, հոգեբանության ինստիտուտի պրոֆեսոր Լև Վիգոտկսու և մտածողության հոգեբանական և իմացաբանական հարցերի լուծման նոր ուղղության հիմնադիր Ժան Պիաժեի տեսությունները: Պրոֆեսորն ընդգծեց, որ այս տեսությունն ապահովում է ավելի դեմոկրատական ուսուցում, որտեղ հաշվի է առնում երեխաների անհատական առանձնահատկությունները՝ մասնավորապես ներառական կրթությունը: Ի դեպ, հետազոտության մասնակից ուսուցիչները արդյունքում փաստել են, որ մեթոդը կայացած է և արդյունավետ:

Մասնագետը պրոֆեսորադասախոսական կազմի հետ նաև քննարկեց միջազգային հեղինակավոր ամսագրերում գիտական հոդվածներ տպագրելու առանձնահատկությունները: Արթին Գոնչուն հանդես եկավ «Խաղը երեխայի կյանքում» և «Ծնող-երեխա փոխհարաբերությունների հոգեբանությունը. մշակութային ազդեցություններն անձի զարգացման վրա» թեմաներով դասախոսություններով:

Արթին Գոնչուն առաջին անգամ է ինչպես Հայաստանում, այնպես էլ Մանկավարժական համալսարանում, երկուսն էլ շատ է հավանել ու սիրել: Պրոֆեսորը նկատեց, որ Մանկավարժական համալսարանում իրեն շատ ջերմ ընդունեցին, ուսանողները հետաքրքրված ու ներգրավված էին դասախոսություններին:

Արթին Գոնչուի հետազոտությունների հիմնական ուղղությունը անձի զարգացումն է: Նա հատկապես հետազոտում է խաղի դերը երեխայի կյանքում, ինչպես նաև սոցիալական և մշակութային առանձնահատկությունների ազդեցությունը մարդու զարգացման և կրթության վրա:

Ներկայումս Արթին Գոնչուն ուսումնասիրում է դպրոցի և շրջապատի ազդեցությունը երեխայի խաղի վրա, ուսուցիչների կրթությունը և մասնագիտական զարգացումը, ինչպես նաև խաղի դերը մայր-երեխա փոխհարաբերություններում:

Նա մի շարք գրքերի հեղինակ է, այդ թվում՝ «Խաղը և զարգացումը», «Խաղի ընթացքում օգտագործած երկխոսությունների վերլուծություն», «Խաղի, հեքիաթի և դպրոցի դերը երեխաների կյանքում»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ներառական կրթությունը կրթական քաղաքականության մաս է

Մանկավարժական համալսարանում կայացավ «Ներառական կրթություն. մարտահրավերներ, հիմնախնդիրներ, լուծումներ» թեմայով երկօրյա գիտապրակտիկ համաժողով, որտեղ ներկաները քննարկեցին ներառական կրթության իրականացումը ՀՀ-ում, առկա խնդիրները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթության ապահովման խոչընդոտները, այս տարիներին գրանցած արդյունքները, ռազմավարությունը և այլն: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության և ՀՊՄՀ-ի համատեղ ջանքերով կազմակերպված համաժողովի բացմանը քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Սողոմոնյանը կարևորեց և արդյունավետ համարեց Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունը: «Մանկավարժական համալսարանը միշտ պատրաստակամ է օգնել ու աջակցել յուրաքանչյուր գործընթացում, այստեղ աշխատում են գիտակ մարդիկ, որոնք գիտեն կրթության արժեքն ու նաև գիտեն ծառայել կրթությանը»,- ասաց նա: Անդրադառնալով համաժողվին՝ Գ. Սողոմոնյանը նկատեց, որ Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի հետ համագործակցությունն օրեցօր ավելի է սերտանում, որն էլ լրացնում է կրթական ոլորտում ներառական կրթության առկա բացթողումները: «Այս ծրագրի հիմքում առկա է բարություն, և յուրաքանչյուրս պետք է քայլենք դրա միջով ու հնարավորինս շատ բարություն տարածենք մեր շուրջը: Յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի գանձն է, որը վստահվում է մեզ. սա լուրջ պատասխանատվություն է: Այստեղ ձեր ստացած փորձը, սովորած գիտելիքները, նոր մեթոդները պետք է վերցնեք և փոխանցեք դպրոց՝ հետադարձ կապով պետք է տեսանելի լինի արդյունքը, որպեսզի հետագայում մենք նախանշենք առաջիկա անելիքները»,- ընդգծեց Գայանե Սողոմոնյանը: Համաժողովի աշխատանքների աջակցելու համար նա հատուկ շնորհակալություն հայտնեց բուհի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանին:

«Աշխատանքի արդյունավետությունը պետք է ապահովենք մենք. նման աշխատանքը բարդ ու դժվար է և միայն պատրաստակամությունն ու սրտացավությունը քիչ է, պետք է բոլորս միավորենք մեր ուժերը, կարողանանք այս ոլորտում հաջողություններ գրանցել և լուծել առկա խնդիրները»-նշեց քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության դպրոցական բաժնի պետ Անահիտ Մելքոնյանը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը նկատեց, որ Մանկավարժական համալսարանի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված հուշագրի շրջանակներում հատկապես ներառական ոլորտին առնչվող բազմաթիվ արդյունավետ ձեռնարկներ են իրականացվել, իսկ Հատուկ կրթության ֆակուլտետը հստակ կրթական հարթակ է ներառականության ոլորտում առկա խնդիրների լուծման համար:

«Այսօր ներառական կրթության ոլորտում աշխատող անձինք բավականաչափ դժվարություններ ունեն, քանզի փոփոխվող հասարակությունն իր հիմնախնդիրներով փոփոխում է ինչպես մարդու հոգեկան գործընթացների ամբողջ դինամիկան, այնպես էլ այն սոցիալական գործոններն ու հնարավոր հակազդումները, որոնց մեջ մենք ներառված ենք: Այդ առումով յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ»,- ասաց Սրբուհի Գևորգյանը:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Կարապետյանն էլ կարևորեց համաժողովի գործնական նշանակությունը: Դեկանը նշեց, որ կրթությունը ոչ միայն որոշակի մակարդակի գիտելիքներ ստանալու միջոց է, այլև սոցիալական և անհատական զարգացման վճռորոշ գործոն, որի հիմնական միջոցներից մեկն էլ մարդու համակողմանի զարգացմանը նպաստելն է: «Առավել կարևորվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ԿԱՊԿՈՒ) կրթության կազմակերպումը: Ներառական կրթության զարգացումը պահանջում է կրթական ողջ համակարգի վերաբերող փոփոխությունների լայն տեսանկյուն: Ներառական կրթությունն ինքնին բազմագործոն գործընթաց է, որը ենթադրում է տարբեր մասնագետների միաժամանակյա աշխատանք. այս գործընթացն սկսվում է նախ և առաջ սրտացավությունից»,- ասաց Սիրանուշ Կարապետյանը՝ հավելելով, որ չնայած ՀՀ-ում կա ներառական կրթության իրականացման բավական դրական տեղաշարժ, այնուամենայնիվ դեռ առկա են որոշակի խնդիրներ, որոնց լուծման ամենակարևոր հարթակներից մեկն էլ այսօրվա համաժողովն է:

«Ներառումը կրթության մեջ նշանակում է արժևորել բոլոր աշակերտներին, ընդունել, որ ներառական կրթությունը հասարակության հիմնասյունն է, խթանել ԿԱՊԿՈՒ աշակերտների մասնակցությունը հասարակական կյանքում և այլն: Այսօր քաղաքապետարանի ենթակայության դեռևս 54 դպրոցում և 8 նախադպրոցական հաստատությունում է իրականացվում ներառական կրթություն»- ասաց դեկանը: Այնուհետև հանրակրթական տարբեր դպրոցների տնօրեններ, հատուկ և սոցիալական մանկավարժներ ներկայացրին, թե ինչպես է իրականացվում ներառական կրթությունն իրենց դպրոցներում և ինչ խնդիրներ են առկա:

Երևանի Զոն Կիրակոսյանի անվան N 20 հիմնական դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանն իր զեկուցման մեջ ընդգծեց, որ ՀՀ-ն միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձ և այն դարձրել է պետական քաղաքականության կարևոր մասը: Խոսելով ներառական կրթություն իրականացնող դպրոցների խնդիրների մասին՝ տնօրենը նկատեց, որ առկա խնդիրները պահանջում են հրատապ լուծում, իսկ դրանցից առավել աչքի են ընկնում դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցումը, տեխնիկական սարքավորումների առկայության, աշակերտների կրթական կարիքներին համապատասխան պարագաների, դիդակտիկ նյութերի բացակայությունը և այլն:

Համաժողովի մասնակիցներն իրենց աշխատանքները շարունակեցին չորս մասնաճյուղում, որտեղ իրականացրին մասնակիցների կողմից առաջադրված իրավիճակային վերլուծություններ, մասնախմբերի աշխատանքը ղեկավարող մասնագետներն էլ վերլուծեցին դրանք:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Բժշկական ապահովագրություն մանկավարժական համալսարանի աշխատողների համար

Մանկավարժական համալսարանը բուհի բոլոր աշխատողների համար մեկ տարով բժշկական ապահովագրության փաստաթուղթ է ստորագրել «Ռոսգոսստրախ»-ի հետ:

Մայիսի 2-ին կազմակերպության վաճառքների բաժնի վարիչը համալսարանի աշխատողներին ծանոթացրեց բժշկական ապահովագրության խնդիրներին ու ծառայությունների նրբություններին: ՀՊՄՀ աշխատողները շահառուներ են, որոնցից յուրաքանչյուրի համար կազմակերպությունը կարող է 3 մլն դրամի բժշկական ծառայություն մատուցել:

«Ռոսգոսստրախ»-ի ներկայացուցիչը ներկայացրեց բժշկական փաթեթի հիմնական սկզբունքները: Ապահովագրությունը ուժի մեջ է ապրիլի 18-ից: Ապահովագրական կազմակերպությունը կփոխհատուցի սուր և խրոնիկ, անհետաձգելի հիվանդությունների, բժշկի կողմից հիմնավորված անհրաժեշտ վիրահատությունների համար: Աշխատողները կարող են օգտվել վճարովի շտապ օգնության ծառայություններից (Էրեբունի և Աստղիկ բժշկական կենտրոններից9, ֆինանսական հատուցում ստանալ ամբուլատոր բուժօգնության՝ բժշկական խորհրդատվության, լաբորատոր և գործիքային հետազոտությունների, սիրտ-անոթային, նյարդային և այլ ստացիոնար, ինչպես նաև դեղորայքային բուժօգնությունների համար, միայն թե պարտադիր է բժշկի նշանակումը և կտրոնը:

Որոշակի ֆինանսական վճարումով կարող են ապահովագրվել նաև աշխատողների ընտանիքների անդամները:

Ապահովագրությունը կգործի Հայաստանի և Արցախի տարածքում:

Կազմակերպության ներկայացուցիչը ներկաներին ծանոթացրեց նաև բժշկական փաթեթի բացառություններին՝ հորդորելով ծառայությունների ամբողջական ցանկին ծանոթանալ ՀՊՄՀ կայքում:

Սպացան հավաստագրեր

Փետրվարի 20-ից մարտի 3-ը Մանկավարժական համալսարանում իրականացվեց աշխարհագրության և էկոլոգիայի գծով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցեց 19 դասախոս: Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ակադեմիական 36 ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացի մասնակիցներին հավաստագրեր հանձնեց:

Ռեկտորը նկատեց, որ նման վերապատրաստումների նպատակն այն է, որ դասախոսները տիրապետեն ժամանակակից տեխնոլոգիաներին, տեղեկանան հետազոտական, գիտական և այլ ոլորտների նորություններին: Ռուբեն Միրզախանյանը կարևորեց նաև այն փաստը, որ դասախոսական կազմը ավելորդ չի համարում այս վերապատրաստումները և ձգտում է սովորել ու առավել կատարելագործվել:

Պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը նշեց, որ հերթական վերապատրաստումը վարել են ոլորտի առաջատար մասնագետները և վերապատրաստվողներին առաջարկեց ներկայացնել դասընթացի հետ կապված դիտարկումները, բացթողումներն ու թերությունները:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը շեշտեց նման վերապատրաստումների կարևորությունը և հավելեց, որ ինչքան էլ որակավորված ու բանիմաց լինի դասախոսը, միևնույն է որոշ ժամանակ անց կարիք է լինում այդ ամենը թարմացնելու: «Աշխարհագրությունն ու էկոլոգիան առավել դինամիկ բնագավառներ են, որտեղ գլոբալ, տարածաշրջանի, ռեգիոնալ և լոկալ մակարդակներով փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են ուսումնական պրոցեսի և մասնագիտական որակների վրա: Այս վերապատրաստումը ցույց տվեց, որ հանրապետության որակյալ և առաջատար մասնագետների հետ շփվելը, նոր կրթական նյութի ներկայացումը նպաստում է նաև կրթական գործընթացի բարելավմանը»,- ասաց Աշոտ Խոյեցյանը:

Վերապատրաստող դասախոս, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Բարդուխ Գաբրիելյանը նախաձեռնությունը երկկողմանի օգտակար համարեց. «Սա նոր տեղեկատվության տրամադրում էր. ակադեմիական և բուհական համակարգի համագործակցության սկիզբ, հուսով եմ, որ այն կշարունակվի»:

Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն, վերապատրաստող դասախոս Էվելինա Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և նշեց, որ դժվար ու պարտավորեցնող էր հանդես գալ փորձառու մասնագետների լսարանում: Մասնագետը նկատեց, որ սա փորձի փոխանակում ու երկխոսություն էր, որն էլ ապացուցում է, որ մասնագետները ջանք չեն խնայում մեր երիտասարդներին նոր գաղափարներով և մոտեցումներով զինելու համար:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Նա աշխատել է Մանկավարժականում

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒՀԻՆ

Հոբելյանը կյանքի ու անցած ճանապարհի հանրագումարն է, մի հայացք անցյալին, որի մեջ մարդու գործն է և հիշողությունները, որոնք սուրբ մասունքի պես անթեղվում են հոգում՝ երբեմն-երբեմն դուրս հորդելու, առկայծելու և անցածը լուսավորելու անզուսպ ցանկությամբ…Այս անգամ իմ զրուցակիցը Գոհար Ոսկանյանն է, ով վերջերս բոլորեց իր կյանքի 70-ամյակը: Կին, ում կյանքի լավագույն տարիները կապված են նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ:

Գոհարը 1966-1971 թթ. սովորել է Ֆիզկուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: Խորհրդային տարիներին եղել է հանրապետության թիվ մեկ սպորտային մարմնամարզուհին հանրապետության հավաքականի թիմում, սպարտակիադաներում ու տարբեր մրցումներում միշտ բարձր է պահել հանրապետության պատիվը: Խորհրդային Միության տարիներին միութենական բոլոր հանրապետությունների տարբեր քաղաքներում՝ Կիևում, Քիշինևում, Մոսկվայում, Մինսկում և այլուր մասնակցել է մարզական տարբեր առաջնությունների: 15 տարեկանում արդեն ԽՍՀՄ սպորտի

վարպետ էր: Եղել է Հայաստանի և Անդրկովկասի մարմնամարզության քառակի չեմպիոն, մասնակցել է ԽՍՀՄ դպրոցականների համամիութենական առաջնությանը, ԽՍՀՄ ժողովուրդների 3-րդ և 4-րդ սպարտակիադաներին, իսկ երեք անգամ՝ ԽՍՀՄ ՖԿԻ սպարտակիադաներին: Սիրով ու ջերմությամբ է հիշում այդ տարիները. ոչինչ չի մոռացել՝ գավաթներ, կրծքանշաններ, մեդալներ, պատվոգրեր, անվանական մրցանակներ…հիմա դրանք բոլորը նրա կյանքի մի մասն են, տարիների ձեռքբերումները, հաջողություններն ու նվիրական հուշերը…

Հայաստանի հավաքականի կազմում Գոհարն այնքան շատ մրցաշարերի է մասնակցել՝ բուհերի, ուսանողական սպարտակիադաների, տարբեր առաջնությունների. հիմա դժվար է բոլորը հիշել ու մեկ-մեկ թվարկել…:

Հիշում է՝ մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը նախարարությունից գրություն էր ուղարկել դպրոց, բայց իրեն թույլ չէին տալիս դասերից բացակայել ու գնալ մրցումների մինչև որ Հ. Շահինյանը անձամբ եկավ դպրոց:

Երբ ծնկի հոդի վնասվածք ստացավ՝ թողեց սպորտը և 1973-ին անցավ մանկավարժական աշխատանքի: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում աշխատանքի անցավ ֆիզիկական դաստիարակության ամբիոնում մինչև 1911 թվականը՝ լաբորանտից մինչև ավագ դասախոս, ապա՝ դոցենտ: Դասավանդել է բուհի գրեթե բոլոր ֆակուլտետներում: Համալսարանի ուսանողներից 4 սպորտի վարպետի է մարզել, որոնք մասնակցել են Գրոդնոյի ուսանողական մրցումներին և մեծ հաջողություններ գրանցել: 1973-2005 թվականներին բարձր մակարդակով ու պատասխանատվությամբ կազմակերպել ու ղեկավարել է միջֆակուլտետային սպարտակիադաների բացման սպորտային մասսայական ելույթները: Բուհում ստեղծել է գեղարվեստական մարմնամարզության՝ աերոբիկայի խմբեր:

Իմ հարցին, թե ինչն է երջանկացնում կնոջը, նա պատասխանում է. «Ինձ համար ամեն ինչ եղել է առաջնային: Սիրել եմ սպորտը, անսահման նվիրվել եմ, այդ սերը եկել է ծնողներիցս, մի խոսքով, հաջողություններս պայմանավորված են սպորտով, ես ինձ համարել եմ երջանիկ սպորտի բնագավառում: Սպորտը տալիս է կամքի ուժ, նպաստում է առողջությանը: Ես համարել եմ ինձ երջանիկ սպորտային ասպարեզում և ընտանիքում:

Նախկին մարմնամարզուհին ու դասախոսը ցավով նկատում է, որ այսօր սպորտդպրոցներում պարապմունքները հիմնականում վճարովի են, սոցիալական պայմաններում բոլորը չէ, որ վճարունակ են, և երիտասարդները չեն զբաղվում սպորտով, մասսայական մարզումները հարգի չեն, պատանիներն ու երիտասարդները սպորտի միայն մի քանի ձևերի են հետևում:

Գոհարը նաև ափսոսանքով է հիշում գեղասահքով զբաղելու իր վաղեմի ցանկության մասին, ապա երիտասարդությանը հորդորում ինքնուրույն մարզվել, կան ինքնուրույն զբաղվելու, մարզվելու ձևեր: Դա անհրաժեշտ է առողջ ապրելակերպի համար:

«Կուզեի ապագա մանկավարժներին առողջություն մաղթել: Կուզենայի, որ տղամարդ ուսուցիչներ շատ ունենայինք: Սպորտը, առողջ ապրելակերպը նաև գեղեցկության գրավականն են»-ասում է Գոհարը:

Երբ մարզչական աշխատանքի է անցել Հրանտ Շահինյանի սպորտդպրոցում՝ ունեցել է մի լավագույն սան, ով կրկեսում ճանաչվել է իր «Աղավնի» համարով. հենց նրան էլ նվիրել է իր մարզական համազգեստը:

Գոհարի հայրը Բիթլիսից գաղթած Վաղարշակ Սահակի Ոսկանյանն է, ով մասնակցել է ԽՍՀՄ առաջին սպարտակիադային Մոսկվայում, ատլետիկայի գծով: Չեմպիոն է եղել: Մայրը թեև դեղագործ էր, բայց սպորտի ջատագով: Հորեղբայրը գրող Հմայակ Սիրասն է, մյուս հորեղբայրը՝ Գառնիկ Ոսկանյան, «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիրն է եղել, զոհվել է պատերազմում:

Տարիների հեռվից Գոհարը հուզմունքով հիշում է ԽՍՀՄ 3-րդ և 4-րդ սպարտակիադաներին իր մասնակցությունը: Հայաստանի կրկնակի, եռակի, քառակի չեմպիոն է սպորտային մարմնամարզությունից: Միշտ առաջին տեղն է գրավել, մեկ անգամ մարզչական թյուրիմացության պատճառով 2-րդ տեղ է գրավել: Ջերմությամբ ու սիրով է հիշում մարզիչներին՝ Ալբերտ Խզմալյանին և Ռոբերտ Աբաջյանին: Յուրաքանչյուր մրցաշար յուրովի հիշարժան էր ու դժվարանում է առանձնացնել, իսկ մարմնամարզությունն անչափ գեղեցիկ մարզաձև է, որ բարդ ու միաժամանակ ճկունություն է պահանջում:

Հիմա Գոհար Ոսկանյանն անցել է վաստակած հանգստի. Նա հաճախ է հիշում իր կյանքի մարզական մեկնարկը Օրջոնոկիձեի մանկապատանեկան դպրոցից, դասախոսական տարիները Մանկավարժականում, երբ մարզում էր բուհի աղջիկների մարմնամարզության հավաքական թիմը…Դրանք այսուհետ իր հարստությունն են ու հպարտությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բազմալեզու հաղորդակցության առանձնահատկությունները

Մանկավարժական համալսարանում Օտար լեզուների ֆակուլտետի, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և գերմանական լեզուների ամբիոնների նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուսանողական միջազգային երկօրյա գիտաժողով՝ «Օտար լեզուների ուսուցումը ինստիտուցիոնալ բազմալեզվության պայմաններում» խորագրով:

Գիտաժողովին մասնակցում էին Գերմանիայից, Մոսկվայից և Սերբիայից ժամանած ուսանողներ: Գիտաժողովի 4 մասնաճյուղերում հայ և օտարազգի մասնակիցները ինստիտուցիոնալ բազմալեզվության համատեքստում քննարկեցին օտար լեզուների ուսուցման, տիպաբանական և գործաբանական վերլուծության առանձնահատկությունների հիմնախնդիրները:

Գիտաժողովի պլենար նիստի բացմանը ՀՀ ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանն ընդգծեց, որ ուսանողը պետք է ձգտի ոչ միայն լավ մասնագետ դառնալ, այլև՝ լավ հետազոտող:

«Պարտադիր չէ շատ լավ իմանալ բոլոր լեզուները, քանզի այսօր ունենք լեզուների ուսուցման նպատակների ասիմետրիա՝ մեկը պետք է իմանալ լավ, մեկով կարողանալ խոսել, մյուսով՝ գրել. այդ ամենը լեզվական մի ցանց է, որտեղ ամեն լեզվի համար տեղ կա»,- հավելեց փոխնախարարը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանն, անդրադառնալով լեզվակրթական քաղաքականության միջազգային սկզբունքներին, նկատեց, որ լեզվական պատշաճ հմտությունների սակավությունը չպետք է անհնար դարձնի քաղաքացիների ակտիվ մասնակցությունը Եվրոպական տարածաշրջանում քաղաքական որոշումների կայացման գործընթացին և հասարակության կյանքին: Այսօր կարևոր է Եվրոպայի քաղաքացիների հետ արդյունավետ և պատշաճ շփվելու կարողությունը: «Մարդկանց բազմալեզու հաղորդակցության «լեզվացանկի» ճանաչումը հանգեցնում է լեզվական հանդուրժողականության և լեզվական տարբերությունների նկատմամբ հարգանքի: Դա ենթադրում է նաև հարգանք խոսքի ազատության, լեզվական փոքրամասնությունների, ամենաքիչն օգտագործվող և ուսուցանվող ազգային լեզուների, միջտարածաշրջանային և միջազգային հաղորդակցմանը նպաստող լեզվական բազմազանության նկատմամբ: Լեզվակրթական քաղաքականությունը սերտորեն առնչվում է ժողովրդավարական քաղաքակրթության արժեքների յուրացման հետ. չէ՞ որ լեզուների ուսուցումը լավագույն միջոցն է միջմշակութային շփման համար»,- ամփոփեց Արա Երեմյանը:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մելանյա Աստվածատրյանը նկատեց, որ այսօր արդեն փոխվել են օտար լեզուների ուսուցման նպատակները. «Մեր նպատակն այն չէ, որ ուժեղացված սովորենք մեկ լեզուն, ապա երկրորդը և այլն, այլ պետք է ստեղծենք մի լեզվացանկ, խաղացանկ, որտեղ յուրաքանչյուր լեզու իր տեղն ունի, ընդհուպ՝ մայրենին»:

Մեջբերելով Գյոթեի խոսքը՝ «Նա, ով օտար լեզու չգիտի, չգիտի նաև մայրենին»՝ պրոֆեսորն ընդգծեց. «Դա ճշմարիտ է, քանի որ եթե բախվում ենք մի լեզվի, սովորում ենք այն, պետք է դա մյուսների հետ համեմատենք, գտնենք նմանություններ և տարբերություններ: Օտար լեզուների ուսուցման նպատակը ոչ միայն հաղորդակցման կոմպետենցիայի ձևավորումն է, այլև՝ կոգնիտիվ հաղորդակցական»:

Մելանյա Աստվածատրյանը խոսեց նաև առկա խնդիրների մասին՝ ընդգծելով, որ խնդիրներ կան հատկապես օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության ուղղությամբ:

Պրոֆեսորն ուրախությամբ նշեց նաև, որ ուսանողներն իրենց զեկուցումներում ներառել են պրակտիկայի կամ մագիստրոսական թեզերի հետազոտությունների արդյունքները, որոնք կապված են բազմալեզվության սկզբունքների, դրանց կիրառման գործիքների բացահայտման հետ:

Ուսանողները երկօրյա գիտաժողովի զեկուցումներում անդրադարձան բազմալեզվության պայմաններում լեզուների ուսուցման և ուսումնառության մեթոդաբանական հիմունքներին, ինստիտուցիոնալ փոփոխություններին, լեզուների տիպաբանական առանձնահատկություններին, ուսուցման դժվարություններին և այլն:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2016 թ. հուլիսի 1-ին մեկնարկած ավստրիական APPEAR դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Միջառարկայնությունը Կովկասյան տարածաշրջանում կայուն տուրիզմի կապակցությամբ 2016 թ. զարգացման համար» նախագծի շրջանակներում համաձայնագիր է ստորագրվել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Ավստրիայի Բնական ռեսուրսների և լանդշաֆտագիտության համալսարանների միջև: Այդպալ ծրագրի շրջանակներում, Հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը և

ամբիոնի վարիչ դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը ապրիլի 24-ից 27-ը հյուրընկալեցին Վիեննայի Բնական պաշարների և լանդշաֆտագիտության համալսարանի 4 և Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի համալսարանի 12 դասախոսներին:

Հյուրերին ողջունեց ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանը, ով ընդգծեց նմանատիպ ծրագրերի և համագործակցությունների կարևորությունը:

Աշխատաժողովի հիմնական նպատակն էր վերապատրաստել դասախոսներին, նախապատրաստել տրանսդիսցիպլինար ուսուցման և դաշտային հետազոտական աշխատանքներին, իսկ օրակարգը հագեցած էր դասախոսություններով, քննարկումներով, զանազան միջոցառումներով: Աշխատաժողովին մասնակցում էր ոչ միայն աշխարհագրության բաժնի պրոֆեսորադասախոսական կազմը, այլև դասախոսներ ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետներից և Երևանի պետական համալսարանից:

Աշխատաժողովի առաջին օրը նվիրված էր Հայաստանի և Վրաստանի թիմային աշխատանքների ամփոփմանը, դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացմանը: Օրը ավարտվեց հայ և օտարերկրյա դասախոսների այցելությամբ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Աշխատաժողովի երկրորդ օրը նվիրված էր համայնքային հանդիպումներին: Հանդիպումներ և քննարկումներ իրականացվեցին Դիլիջան և Մեղրաձոր համայնքներում: Քննարկումներին մասնակցեցին նաև կայուն տուրիզմի զարգացման հիմնախնդիրներով մտահոգված հասարակական կազմակերպություններ, համայնքապետեր, գյուղացիներ: Դասախոսները համայնքներում համատեղ ակտիվ քննարկումներ անցկացրին շահառուների հետ, փորձեցին բացահայտել համայնքներում առկա հիմնախնդիրները, խոչընդոտները, որոնք խանգարում են տուրիզմի զարգացմանը: Արտասահմանցի գործընկերները տպավորված էին համայնքի բնակչության ակտիվությամբ, հյուրընկալությամբ, ինչպես նաև հայկական թիմի բարձր պատրաստվածության և մասնագիտական խորը գիտելիքներ և հմտություններ դրսևորելու կարողությամբ:

Առավել հագեցած էր ամփոփման փուլը, որի ընթացքում ընդհանրացվեցին արդյունքները և մշակվեց հետագա անելիքների ծրագիրը:

Հյուրերին անակնկալ էին պատրաստել նաև աշխարհագրության 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները: Մարինե Մաթոսյանի ղեկավարությամբ նրանք փոքրիկ ներկայացումներով փորձել էին վեր հանել Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ներուժը և մշակութային բազմազանությունը:

Աշխատաժողովը ծառայեց իր նպատակին. ծրագրի ղեկավարներ Անդրեաս Մուհարը, Քրսիտիան Բաունգարդները, Ժոզեֆ Սալկուլաձեն, Աշոտ Խոյեցյանը, ինչպես նաև արտաքին փորձագետ Արմեն Գևորգյանը, դոնոր կազմակերպության ներկայացուցիչ Նորա Ալանակյանը հաստատեցին աշխատաժողովի արդյունավետության և արժանի գործընկերության փաստը:

Մարինե ՄԱԹՈՍՅԱՆ

ԿՐԿԻՆ ՄՐՑՈՒՄ ԵՆ ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԸ

Ապրիլի 22-ին «Այբ» դպրոցում տարվա ամենաքիմիական օրն էր. կայացան արդեն ավանդական դարձած պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի կիսաեզրափակիչ և եզրափակիչ մարտերը:

Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը ինտերակտիվ խաղի սկզբունքով անցկացվող թիմային մրցույթ է, որտեղ 9-12-րդ դասարանների աշակերտները լուծում են քիմիայի բարդ ու հետաքրքիր առաջադրանքներ և բանավիճում գիտական թեմաների շուրջ: «Այբ» հիմնադրամի կազմակերպած մրցույթը Հայաստանում անցկացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հովանու ներքո: Արդեն 7-րդ տարին անընդմեջ կազմակերպվող մրցաշարի կայացման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՊՄՀ քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները՝ ծրագրի ղեկավար դոցենտ Նինա Հոբոսյանը, ժյուրիի փոխնախագահ պրոֆեսոր Աշոտ Բաբախանյանը, ժյուրիի անդամ դոցենտ Վարդուհի Հովսեփյանը, ինչպես նաև երիտասարդ գիտաշխատողները և ասպիրանտները, որոնք կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի քիմիա բաժնի տարբեր տարիների շրջանավարտներն են: Մանկավարժական համալսարանի ներկայացուցիչներն ընդգրկված էին նաև մարտերը վարողների և կամավորների կազմում. ապագա ուսուցիչները մանկավարժական պրակտիկայի շրջանակներում մրցույթների և միջոցառումների կազմակերպման մեծ փորձ ձեռք բերեցին:

Մրցաշարի նպատակներն են՝ աշակերտներին ներգրավել գործնական գիտական գործունեության մեջ, սովորեցնել խմբային աշխատանքի չափանիշներն ու ձևերը, հետաքրքրություն առաջացնել քիմիայի նկատմամբ, պայմաններ ստեղծել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման համար, խթանել քիմիայի արտադասարանական աշխատանքների կազմակերպումը, բարձրացնել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Նշենք, որ այս տարի մրցաշարն ունեցել է աննախադեպ թվով մասնակիցներ՝ 43 թիմ, 208 մասնակից աշակերտ և 76 մարզիչ ու ղեկավար Հայաստանից և Արցախից: Հարկ ենք համարում նշել, որ մրցաշարի քառորդ եզրափակչի շրջանակներում ՀՊՄՀ քիմիայի բաժնի ուսանողները հյուրընկալել էին Արցախի Մարտունու շրջանի «Մոնթեաբերդ» թիմի աշակերտներին և ուսուցիչներին, հետաքրքրաշարժ փորձեր ցուցադրել, շրջայց կազմակերպել ֆակուլտետում և թանգարանում:

«Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարն իր տեսակի մեջ միակն է Հայաստանում: Մրցույթն աշակերտներին հնարավորություն է տալիս ամբողջ թիմով փնտրել և գտնել լուծումներ առաջադրանքների միջոցով տրվող այնպիսի հարցադրումների, որոնք այս պահին գուցե դեռ լուծում չունեն, ուսումնասիրել համաշխարհային փորձը և առաջարկել սեփական լուծումները»,- հավելում է պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի ղեկավար Նինա Հոբոսյանը:

Քիմիապես ինչպե՞ս կանխարգելել ճառագայթման հետևանքները, ինչպիսի՞ նյութեր և կառուցվածքային ի՞նչ առանձնահատկությունների շնորհիվ կարող են առաջացնել քաղցր համի զգացում, ի՞նչ հիվանդությունների ախտորոշման մեջ են կիրառելի մարդու արտաշնչած օդի անալիզի տվյալները. այս և նման այլ հարցերի շուրջ էին «Այբ» դպրոցում բանավիճում մրցաշարի կիսաեզրափակիչ փուլ անցած 11 թիմերը: Եռափուլ պայքարում պատվավոր առաջին տեղը զբաղեցրեց Երևանի «Հերացի» դպրոցի «Օգանեսոն» թիմը, թիմը: Երկրորդ տեղում Վանաձորի «Էվրիկա» թիմն էր, երրորդում՝ Գյումրու «Ֆոտոն» թիմը:

Ուսանողի օրագրից



Համլետ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Ուզում եմ փակել աչքերս ու մի պահ անխոս սուզվել վճիտ օվկիանի հատակը, լողալ նրա անհուն խորքերն ու պատսպարվել այնտեղ՝ երանավետ անդորրության գրկում... Եվ մի՞թե սա փրկություն է: Սուզվե՛լ, հեռանա՛լ...Եվ սա՞ է ապրել կոչվում: Այո՛, գիտեմ՝ երբեմն անէանալ ու անասելի է ու սրտաբաղձ մի կիրք, բայց այն պայմանական է, դու պետք է կիզակետում լինես, որ աչքդ քեզ սովորեցնի, որ ցավի հոգիդ ու կոփվի-...Այս ամենին վերջ չկա, ինչպես գիշերվա և լուսաբացի հաջորդականությանը: Մոռանալ ամեն ցավ ու վիշտ և դյութվել ապրումի անսանձ փափագով, գոհությամբ ու անբավ սիրով, օրհներգել կյանքը հոգեթով...Անգամ օրհնել այսօրվա դառն ու անսփոփ կսկիծը, որն անպայման լուսաշող սկիզբ է ազդարարելու:

Կյանքիդ բանաձևն աշխատիր չկապել մարդկանց հետ, քանզի ծնվել ես ազատ, կապանքներից զերծ և ի վերուստ կոչված ես ԱՊՐԵԼՈՒ: Ապրիր, ճանաչիր սիրիր, ընկիր, բայց մի՛ հաձնվիր...Մի պահ արժևորել եմ ուզում այն, ինչը կոչված է լինելու կյանքի մշտահմա բաղադրիչը: Տարրեր, որոնք ձևավորում են կյանքը, այն ավելի իմաստալից դարձնում, պարզապես թմրում է միտքդ այդ ամենի առատությունից, անվերջությունից:

Անվերջությո՛ւն, իսկ գուցե քեզ տրված անսահմանությունը շռայլությո՞ւն է, երբևէ խորհե՞լ ես այդ մասին, երբևէ աշխարհին նայե՞լ ես այդ աչքով, վերլուծե՞լ ես նրա ժանտ ու լայնածավալ քարտեզը: Չէ՛, քո ցավը քեզ բթացրել է, ընկճել, կոտրած ու ճկած ճյուղի է վերածվել, փակել աչքերդ...Հապա փորձիր նայել, ու դու, վստահ եմ, կտեսնես ավելին, ու դու այդժամ մորմոքը կզգաս, գուցե սեփական կաշվիցդ դուրս ցավն առավել անսփոփ լինի: Դե՛, շտապիր ոչ թե կյանքում, այլ կյանքը ճանաչելու կայարանում:

ԾՈՎԸ ՀԱՅՐԵՆԻՔ ՉՈՒՆԻ

Միայն Արևելքում են ընդունակ սիրել և գնահատել ջուրը, միայն հարավցին կարող է ֆիզիոլոգիապես, ամբողջ էությամբ ներընկալել և հաճույք ստանալ հազիվ նկատվող ջրաշիթի թրթռոցից:

Երվանդ Շահազիզ

Օրերս Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հովանու ներքո, ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի և ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի խմբագրությամբ լույս տեսավ գեղարվեստական, պատմամշակութային և փաստագրական մեծածավալ նյութ պարունակող «Հայազգի ծովանկարիչները» հիմնարար ուսումնասիրությունը, որը արվեստագիտության թեկնածու, դոցենտ Արա Հակոբյանի երկարամյա հետազոտությունների և պրպտումների արդյունքն է:

Առաջին անգամ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացվում է հայազգի ծովանկարիչների և ծովանկարին անդրադարձած արվեստագետների՝ փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հատկապես կարևորվում են նրանց կտավներում արտացոլված ժանրա-թեմատիկ բովանդակության, ազգային մտածողության, գունային անհատական ընկալումների, տեխնիկական յուրահատուկ կատարումների հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվում են նկարիչների վրձնած ծովապատկերների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ:

Մեծածավալ աշխատությունը (444 էջ) էապես խորացնում է ազգային բնանկարի մասին մեր պատկերացումները: Նյութը դիտարկված ու լուսաբանված է տարբեր կողմերից, պատմամշակութային լայն համատեքստում, գիտական շրջանառության մեջ են դրվել մինչ այժմ անհայտ անուններ, ստեղծագործություններ, բացահայտվել և մատնանշվել են հայ ծովանկարչության առավել բնորոշ, ուրույն գծերը:

Երկարամյա հետազոտական, վերլուծական աշխատանքի արդյունքում, մանրամասն անդրադառնալով չորս տարերքներից ամենաարգասավորի՝ ջրի պատկերավորման բազում օրինակների (արևելքում և արևմուտքում, նախաքրիստոնեական շրջանում, միջնադարում և Վերածննդի ժամանակահատվածում ծովափնյա, լճակների, արագահոս գետերի ընթացքը պատկերող տեսարաններ) հեղինակը ներկայացնում է բնանկարի շրջանակներից ծովանկարչության ժանրի սահուն անջատումը և հիմնավորում այն որպես կերպարվեստի ժանրերից մեկի (բնանկարի) բնականոն զարգացման հետևանք:

Արվեստում, ինչպես ամենուր, գլխավորը ինքնությունն է: Բնավորությամբ, հայացքներով տարբեր հայազգի նկարիչներին միավորողը նրանց սերն է դեպի ջուրը, ասես նրանցից յուրաքանչյուրը գենետիկորեն կապ զգալով այդ տարերքի կենսատու կարողությունների հետ, ծովանկարի ժանրում արտաբերել է իր ստեղծագործության առավել զորեղ հատկանիշները. բնության բուռն ու խորունկ ընկալումը, գույնի մեջ հնչյունի ձգտումը, սիմֆոնիկ վառ հնչողությունը, որ երբեմն ձեռք է բերում սուր, զգայագրգիռ գունահարաբերումների բնույթ: Հիրավի, ծովանկարչության արվեստն ըստ սահմանման պիտի լինի կրքոտ: Առանց կրքի չկա արվեստ, քանզի նույնիսկ պրոֆեսիոնալ կատարման բարձրագույն մակարդակը առանց կրքի ու զգացմունքի ընդամենը լավ արհեստ է:



Յուրաքանչյուր մեծ նկարիչ ազգային է նախ և առաջ իր խառնվածքով: Խռովահույզ տարերքի մեջ խաղաղություն փնտրող անհանգիստ հոգու և ազգային հախուռն խառնվածքի արտահայտությունն է ծովի հանդեպ հայազգի նկարիչների ունեցած անսահման սերը: Նրանցից յուրաքանչյուրը «հարազատացել է» ծովին, լիովին զգացել է ու ընկալել նրա «բնավորությունը», դարձել նրա մի մասնիկը և «իմպրովիզացիոն» ճանապարհով վերարտադրել այն կտավի վրա, մեկ իմպրեսիոնիստական, մեկ սիմվոլիզմի ոճով, մեկ էլ՝ ակադեմիական նկարելաեղանակով:

Հայտնի է, որ յուրաքանչյուր ազգային մշակույթ ունի արվեստի գործն արժևորելու սեփական չափանիշները: Սակայն ամեն ազգային մշակույթ չէ, որ ունի սեփական չափանիշների մակարդակը համազգայինին հասցնող նկարիչներ: Ազգային արվեստի ուժը ստեղծագործական անհատականությունների բազմազանության, նրանց անկրկնելիության մեջ է: Բավական է հիշատակել Հովհաննես Այվազովսկու, Մկրտիչ Ճիվանյանի, Էմանուել Մահտեսյանի, Արսեն Շաբանյանի, Վարդան Մախոխյանի, Կարապետ Ադամյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Փանոս Թերլեմեզյանի, Սեդրակ Առաքելյանի և այլոց անունները, որոնց ծովապատկերներն ու դրանց հանգամանալի վերլուծությունները զետեղված են մեծածավալ աշխատության էջերում:

Գրքի 352 վերատպություններում պատկերված է ծովի թովչանքը իր բոլոր դրսևորումներով՝ սկսած խաղաղ ժպտացող, բացարձակ խաղաղությամբ ու դալուկ հեքքով համակված, անխռով ծովի անդորրից մինչև կտավի վրա հավերժացած ահեղագոչ փոթորիկները, ծանրածանր ալիքները, որոնք պատրաստ են դուրս հորդելու խոշոր շրջանակներից:

Աշխատության հեղինակը գտնում է, որ ազգայինի հատկանիշները պետք չէ փնտրել սոսկ այուժեներում: Գաղտնիքն անհրաժեշտ է փնտրել արվեստագետի «տեմպերամենտի», ստեղծագործական աշխատանքի մեթոդաբանության մեջ: Արժևորելով յուրաքանչյուրի ներդրումը՝ հարկավոր է նկատի ունենալ, որ նկարչական ոչ մի դպրոց, ոչ մի անհատ նկարիչ չի կարող զարգանալ աշխարհից կտրված, հատկապես 20-րդ դարում վիթխարի չափերի հասած բազմակողմանի առնչությունների պայմաններում: Վերլուծություններում մեծ կարևորություն է տրվում հարևան երկրների հետ հայ կերպարվեստի՝ մասնավորապես բնանկարի ժանրում ունեցած առնչություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ բացահայտվում է ոչ միայն դրանց պատմական ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները:

Սփյուռքահայ նկարիչների՝ Արսեն Շաբանյանի, Վարդան Մախոխյանի, Կարապետ Ադամյանի և այլոց ստեղծագործությունները գնահատելիս առանձնակի ուշադրություն է դարձվում նրանց հարափոփոխ կենսագրություններին, քանզի ցրված լինելով աշխարհով մեկ՝ նրանք զատված են մայր հայրենիքից, հայրենի մշակույթի բարեբեր հողից: Ուստի նրանց գործերը քննվում են օտար արվեստների հետ ունեցած նրանց հարաբերակցության մեջ: Դա հնարավորություն է տալիս գրքի հեղինակին ըստ արժանվույն գնահատել արվեստի ասպարեզում նրանց բոլոր կարգի ձեռքբերումներն ու նվաճումները:

Տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքում ծնված գիրքը վերածվեց կենսատու ջրով փայլեցված հայելու, որի վրա արտացոլվեցին ժանրի շուրջ խմբավորված 58 նկարիչ-արվեստագետների ինքնատիպ երփնագրերն ու աշխարհընկալման առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր ստեղծագործության գեղարվեստական արժեքի հիմնական չափանիշը հանդիսատեսի վրա նրա ունեցած ներգործության աստիճանն է, որը որոշարկվում է բովանդակության և ձևի սերտ միասնությամբ: Իր կոմպոզիցիոն կառուցվածքով, տեքստ-նկար ռիթմիկ հաջորդականությամբ, որոնք հնչում են որպես մի ամբողջական և ներդաշնակ համանվագ ու ապշեցնում կատարյալ ներդաշնակությամբ, խորը մասնագիտական գիտական հիմնավորումներով «Հայազգի ծովանկարիչները» պատկերազարդ գիրքը կարելի է համարել Արա Հակոբյանի՝ նկարիչ-արվեստաբանի փայլուն գեղագիտական մտածողության հանրագումար:

Արվեստը նման է անվերջ վեր խոյացող երկնաքերի, որի վրա ամեն եկող սերունդ դնում է իր քարը: Հիմնաքարերի, այն է՝ ավանդույթների նկատմամբ հոգատար վերաբերմունքը ամենից առաջ պետք է արտահայտվի նվիրական ուսումնասիրության, նոր կենսունակ տեսակետ գտնելու մեջ: Քիչ է միայն փառավոր անցյալ ունենալը, անհրաժեշտ է նաև դառնալ այդ անցյալի տերը՝ հանուն ներկայի և ապագայի:

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Աուտիզմը դեռևս բացահայտված չէ

Ողջ աշխարհում ապրիլ ամիսը համարվում է աուտիզմի իրազեկման ամիս: Աուտիզմը հաղորդակցման, սոցիալիզացիայի, հարմարվողական վարքագծի և խոսքի զարգացման ծանր խանգարում է, որն արտահայտվում է մինչև երեխայի 3 տարեկան հասակը: Այսօր այն կարելի է դասել 21-րդ դարի չբացահայտված հիվանդությունների շարքին: Հիվանդությունը ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կտրուկ աճում է: Մանկավարժական համալսարանի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն դասախոսներ Աննա Չարչյանի, Ալվինա Հայրապետյանի և Էմիլյա Թադևոսյանի նախաձեռնությամբ բուհում կազմակերպվեց հետաքրքիր ֆլեշ-մոբ:

Միջոցառումը մեկնարկեց «ինդիգո երեխաներին» խորհրդանշող կապույտ փուչիկների թռիչքով? ողջ բուհի շենքով, ապա ուսանողները ֆլեշ-մոբի միջոցով բոլորին մասնակից դարձրին ձեռնարկին:

«Աուտիզմը դեռևս բացահայտված չէ, այդ պատճառով այն մնում է հասարակության համար առանցքային, կարևոր ուսումնասիրման արժանի թեմա, հետևաբար իրազեկումը շատ կարևոր է: Իրազեկումը ընտանիքների համար առավել կարևոր է, քան նման խնդիր ունեցող երեխաների»-նշեց Ալվինա Հայրապետյանը:

Ամեն տարի իրազեկման միջոցառումները կրում են տարբեր կարգախոսներ,

այս տարի «Դու մենակ չես» կարգախոսով ձեռնարկի մասնակիցները ֆլեշ-մոբի օգնությամբ, կապույտ ներկված ձեռքերի արտատպմամբ, հավաքեցին փազլի կտորներ? խորհրդանշելով, որ հասարկությունը ատուիզմով հիվանդ երեխաների կողքին է: Աուտիզմը ավելի հաճախ հանդիպում է տղաների մոտ: Դեռևս լիովին ապացուցված չեն աուտիզմի առաջացման պատճառները, սակայն մասնագետների մեծ մասը կարծում է, որ այն ի հայտ է գալիս գենետիկական խախտումների պատճառով, անհատական է և բազմազան:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 03.05. 2017 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am